

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2010 թվականի գերակա խնդիրների լուծման միջոցառումների իրականացման ընթացքի մասին

«Հանրակրթական ոլորտի բարեփոխումներ» գերակա խնդրի լուծմանն ուղղված՝ հանրակրթական հաստատություններում ուսուցման նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնման ուղղությամբ 2010 թվականի առաջին եռամսյակում Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնում (ԿՏԱԿ) կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկում, ցանցային սարքավորումների նորացում, Շարժական ինտերնետային-համակարգչային կայանի շահագործում

- կատարվել են Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի (ՀԴԻՑ) ընթացիկ կառավարման աշխատանքները (ՀԴԻՑ-ի աշխատանքի հսկողություն, ՀԴԻՑ-ի վիճակը բնութագրող դինամիկ շտեմարանի շահագործում և այլն),
- ԿՏԱԿ-ի մարզային համակարգողների կողմից կատարվել են այցելություններ ՀԴԻՑ-ում ընդգրկված՝ Հայաստանի բոլոր մարզերում տեղաբաշխված 140 դպրոցներ,
- հաշվառվել են ՀԴԻՑ-ի խափանված կապի սարքավորումները՝ հետազայում դրանց փոխարինման համար անհրաժեշտ նոր սարքավորումների գնման նպատակով,
- կատարվել են ՀԴԻՑ-ում նոր դպրոցների ընդգրկման մրցույթի նյութերի նախապատրաստման աշխատանքները, հայտարարվել է «300 դպրոցների միացում Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցին» մրցույթը,
- իրականացվել է Շարժական ինտերնետային-համակարգչային կայանի (ՇԻՀԿ) շահագործումը Արմավիրի մարզի Բագարան և Երվանդաշատ, Արարատի մարզի Տիգրանաշեն և Զանգակատուն, Վայոց Ձորի մարզի Բարձրունի համայնքներում, պարբերաբար վերահսկվել է ՇԻՀԿ-ի աշխատանքը:

2. «Կրթական համալիր էջ» պորտալի շահագործում (պաշարների ու բովանդակային պարունակության համալրում, կրթական առցանց միջոցառումների կազմակերպում), ԿՏԱԿ-ի կայքի վարում

- իրականացվել է «Կրթական համալիր էջ» պորտալի (www.armedu.am) շահագործումը՝ պարբերաբար թարմացվել է կրթական տեղեկատվությունը, հարստացվել են ուսումնամեթոդական պաշարները, ստեղծվել են «Դպրոցականների առարկայական օլիմպիադա 2010», «Դիմորդ 2010», «Արտաքին

գնահատում 2010» տեղեկատվական բաժինները, տեղադրվել են «Մաթեմատիկայի ինտերնետային ամսագրի» նյութերը, կազմակերպվել է առցանց հաղորդակցման միջավայրի, «Սփյուռք» ենթակայքի և պորտալի անգլերեն բաժնի բնականոն աշխատանքը,

- կազմակերպվել և անցկացվել է «Դպրոցում ինֆորմատիկա առարկայի դասավանդման արդյունավետությանը նպաստող միջոցներ» երկրորդ առցանց խորհրդաժողովը (http://armedu.am/arm/virtual.php?sec=conference&forum_id=2&topic_id=337),
- նախապատրաստվել է պորտալի ֆորումային համակարգի կատարելագործման աշխատանքը՝ ձեռք է բերվել նոր ծրագրային համակարգ, իրականացվել են դրա տեղայնացման աշխատանքները,
- ստեղծվել է «Համացանցի օգտագործման ուղեցույց» ուսումնասովանողական ձեռնարկի կայք-տարբերակը (<http://www.ktak.am/handbook>),
- իրականացվել է ԿՏԱԿ-ի կայքի (www.ktak.am) շահագործումը:

3. Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին վիճակագրական տվյալների հավաքում, մշակում, վերլուծություն, 2009-2010 ուսումնական տարվա տեղեկատվական հիմնապաշարի ստեղծում

- կատարվել են «Հանրակրթական ուսումնական հաստատությունների 2009-2010 ուսումնական տարվա գործունեության մասին» վարչական վիճակագրական հաշվետվությունների հավաքման, ստուգման և տեղեկատվության մուտքագրման աշխատանքները,
- կատարվել են հանրակրթության ոլորտի 2009-2010 ուսումնական տարվա տեղեկատվական հիմնապաշարի ստեղծման աշխատանքները,
- կազմվել են հանրակրթության ոլորտը բնութագրող ամփոփ վիճակագրական տեղեկանքներ, աղյուսակներ՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Ազգային վիճակագրության ծառայություն ներկայացնելու համար,
- կազմվել և Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ԿԿՏՀ) գործունեության հեռանկարներին նվիրված խորհրդակցությանը ներկայացվել է զեկուցում նախադպրոցական ԿԿՏՀ-ի ստեղծման աշխատանքների մասին:

4. Կրթության ոլորտում ՏՀՏ բնագավառի ծրագրեր իրականացնող կազմակերպությունների գործունեության ուսումնասիրություն, գործընկերային կապերի հաստատում և այդ ծրագրերի համակարգում

- ՏՀՏ ոլորտի կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցության նպատակով՝ մասնակցություն «Intel» ընկերության կրթական կոնֆերանսին, «Մայքրոսոֆթ ԱրԷյ» կազմակերպության «Համակարգչային և ինտերնետ անվտանգություն» թեմայով սեմինարին

(ներկայացվել է «Համացանցի օգտագործման ուղեցույցը» զեկուցումը), Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի «Թվային տեխնիկական միջոցները՝ արդյունավետ կրթության գործիքներ» միջազգային եռօրյա ստուգատեսին (ներկայացվել է «Էլեկտրոնային առաջին դասագրքերը Հայաստանում. զարգացման հեռանկարներ» թեմայով զեկուցումը), «Մայքրոսոֆթ» ընկերության կազմակերպած «Նորարար ուսուցիչների եվրոպական համաժողովին» (ք. Բեռլին),

- համակարգվել են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2009 թվականի օգոստոսի 24-ի «Համակարգչային գրագիտության ուսուցման ծրագրի նախագծի փորձնական փուլի կատարումն ու «ՏՀՏ-ն դպրոցում» ծրագրի ուսումնասիրությունն ապահովող աշխատանքային խումբ ստեղծելու մասին» հ. 756-Ս/Ք հրամանով ստեղծված աշխատանքային խմբի աշխատանքները, արդյունքների վերաբերյալ համառոտ տեղեկանք է ներկայացվել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության փոխնախարար Մ.Մկրտչյանին,
- կազմվել և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության (ԿԳ) փոխնախարարին ու ԿԳ նախարարության հանրակրթության վարչություն են ներկայացվել համապատասխան փաստաթղթեր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված «Հայաստանի հանրակրթության ոլորտում համակարգչային գրագիտության բարձրացմանն ուղղված միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի նախապատրաստման համար:

5. Համակարգչային սարքավորումներով հանրակրթական դպրոցների համալրում, դպրոցներում համակարգչային ուսումնական կենտրոնների ստեղծում

- ի կատարումն ՀՀ վարչապետի 2010թ. հունվարի 251 հ.02/24.2/507-10 հանձնարարականի և ՀՀ կրթության և գիտության նախարարի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դպրոցներին համակարգչային համակազմ հատկացնելու մասին» 19.02.2010թ. հ.61-Ս/Ք հրամանի իրականացվել են. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) երեք ավագ դպրոցներում տեխնոլոգիական դասարանների ստեղծման աշխատանքները,
- Ստեփանակերտում անցկացվել է սեմինար խորհրդակցություն «Կրթության ոլորտում ՏՀՏ ներդրման խնդիրները» թեմայով՝ ԼՂՀ դպրոցների ու բուհերի ներկայացուցիչների մասնակցությամբ:

6. Կազմակերպվել և անցկացվել է մարզային համակարգողների սեմինար-հանդիպում, որտեղ քննարկվել են «Թթենի» կառավարման համակարգի օգտագործման, «Կրթական համալիր էջ» պորտալի բովանդակության հարստացման ու օգտագործողների շրջանակի ընդլայնման, դպրոցների վիճակագրական տվյալների հավաքագրման և այլ հարցեր: